ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ՏՓ-22/1

ք. Երևան

« 19 » հունվարի 2022թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Ա.Նիկոյանի, որը գործում է դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՖՎ&Գ» ՍՊԸ-ի, ի դեմս Ընկերության տնօրեն Վ. Ղազարյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար տվյալների փոխանցման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **14000000 (տասնչորս միլիոն)** << դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և << օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է << դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրի պայմանները կիրառվում են կողմերի միջև 01.01.2022թ.-ին փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև պայմանագիր կնքվելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է պայմանագիրը ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քննչական կոմիտե	«ՖՎ&Գ» ՍՊԸ
Ք.Երևան Մամիկոնյանց 46/5	ՀՀ, ք. Երևան,0014 Ազատության պող.24,
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	4 շինություն
ՀՀ 900011000834	«ԱրմՄվիսԲանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02631263	Հ/Հ 25000105200110
	ՀՎՀՀ 03004979
	էլ. հասցեն՝ info@fvg.am
	հեռ. (091333555)
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«19» հունվարի 2022թ. կնքված
«ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ՏՓ-22/1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության					
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	մատուցման ժամկետը
1	72311240/1	Տվյալների փոխանցման ծառայություններ	դրամ	14000000	25.12.2022թ.

ՀՀ քննչական կոմիտեի տվյալների փոխանակման գերատեսչական ցանցի ընդհանուր սպասարկում,

1 ք.Երևան, "Զվարթնոց" օ/կ

2 ք.Երևան, Ազատության 26 (Պ.Սևակի 4)

3 ք.Երևան, Բաբայան 4, 2-րդ հարկ

4 ք.Երևան, Բաբայան 4, 4-րդ հարկ

5 ք.Երևան, Կոմիտասի 51Ա

6 ք.Երևան, Ահարոնյանփ.թիվ 3

7 ք.Երևան, Բորյանփ.թիվ 1

8 ք.Երևան, Մամիկոնյանց 46/5

9 ք.Երևան, Ա.Սարգսյան փ.թիվ 22

10 ք.Երևան, Գ.Նժդեհի փ.թիվ 27

11 ք.Երևան, Ծովակալ Իսակովի պողոտա թիվ 9

12 ք.Երևան, Մ.Խորենացուփ.թիվ 162

13 ք.Երևան, Շինարարների փ.թիվ 10/1

14 ք.Երևան, Վրացյան փ.թիվ 90

15 ք.Երևան, Կադաստրս Կոմիտասի պ. 35/2

16 Արագածոտնի մարզ ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու 4

17 Արագածոտնի մարզ ք.Ապարան,Գայիփ.թիվ9

18 Արագածոտնի մարզ ք.Թալին,Գորկուփ.թիվ 14

19 Արարատի մարզ ք. Արտաշատ, Մարքսի 15ա

20 Արարատի մարզ, Ք.Մասիս, կենտրոնական հրապարակ 4

21 Արարատի մարզ ք.Վեդի, Թումանյան 5/1

22 Արմավիրի մարզ ք.Արմավիր,Ա.Ջիվանուփ.թիվ 3

23 Արմավիրի մարզ ք.Արմավիր,Հանրապետությանփ.թիվ 22

24 Արմավիրի մարզ ք.Էջմիածին,Կամոյիփ.թիվ 15

25 Գեղարքունիքի մարզ ք.Գավառ,Բույնաթյան փ.1-ին անցում N2

26 Գեղարքունիքի մարզ ք. Մարտունի, Գ. Նժդեհի 7/4-1

27 Գեղարքունիքի մարզ ք.Սևան,Դեմիրճյանփ.թիվ8

28 Գեղարքունիքի մարզ ք.Վարդենիս,Վ.Համբարձումյան47

29 Գեղարքունիքի մարզ, ք.Սևան,Նաիրյան 189

30 ԼՂՀ, ք. Մարտակերտ, Ազատամարտիկների 121

31 ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Մելիքավան 1ա

32 Լոռու մարզ ք.Ալավերդի ,Թումանյանփ.թիվ 3

33 Լոռու մարզ ք.Սպիտակ, Ալեք Մանուկյանփ.թիվ 1ա

34 Լոռու մարզ ք.Ստեփանավան, Ս.Սարգսյանփ.թիվ 37

35 Լոռու մարզ ք.Վանաձոր, Ամիրյան 10

36 Լոռու մարզ ք.Տաշիր, Պուշկինիփ.թիվ 100

37 Լոռու մարզ ք.Վանաձոր, Զորավար Անդրանիկի 12

38 Կոտայքի մարզ ք.Աբովյան, Զ.Անդրանիկի փ.թիվ 5

39 Կոտայքի մարզ ք.Եղվարդ, Շիրակիփ.թիվ 2

40 Կոտայքի մարզ ք.Հրազդան, Կենտրոնթաղ. 52/2

41 Կոտայքի մարզ ք.Չարենցավան, Աբովյան 8

42 Շիրակի մարզ ք. Արթիկ, Բաղրամյան 4

43 Շիրակի մարզ, ք.Գյումրի, Շիրակացիփ. թիվ 19/Ա - ԿԶՔԲ

44 Շիրակի մարզ, ք.Գյումրի, Շիրակացի 68/1

45 Սյունիքի մարզ, ք Գորիս, Նարեկացուփ.թիվ3

46 Սյունիքի մարզ, ք.Կապան, Երկաթուղայինների 4

47 Սյունիքի մարզ, ք.Մեղրի, Զ.Անդրանիկի փ.թիվ 10

48 Սյունիքի մարզ, ք.Սիսիան, Գ.Նժդեհի փ.թիվ 6

49 Սյունիքի մարզ, ք.Սիսիան, Սիսական փողոց 23ա

50 Վայոց Ձորի մարզ ք.Եղեգնաձոր, Միկոյանփ.թիվ 18

51 Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, Թամանցիների 45/1

52 Տավուշի մարզ ք.Բերդ, Լևոն-Բեկիփ.թիվ 12

53 Տավուշի մարզ ք.Դիլիջան, Մյասնիկյանփ.թիվ 57

54 Տավուշի մարզ ք.Իջևան, Մելիքբեկյան 3

55 Տավուշի մարզ ք.Նոյեմբերյան, Զ. Անդրանիկի 3

56 Տավուշի մարզ, գ. Գետահովիտ, 1-ինփ. 3-րդ շենք

հասցեներում
այդ թվում՝

- ՀՀ քննչական կոմիտեի տվյալների փոխանակման գերատեսչական ցանցի համակցում ՀՀ Ոստիկանության գերատեսչական ցանցի հետ (հասցեավորում և երթուղում, որոշ ստորաբաժանումների համար ընդհանուր աբոնենտային երթուղիչ);
- ՀՀ քննչական կոմիտեի տվյալների փոխանակման գերատեսչական ցանցի միացման կազմակերպում այլ գերատեսչությունների հետ;
- ՀՀ քննչական կոմիտեի տվյալների փոխանակման գերատեսչական ցանցի տեխնիկական փաստաթղթերի պատրաստում և պարբերաբար թարմացում;
- երթուղիչի պարամետրերի կարգաբերում, ծրագրավորում;
- 24/7 սխեմայով սարքավորումների դիտարկում, կառավարում և տեխնիկական աջակցություն;
- անվտանգության մեխանիզմների կիրառում (մատչելիության աղյուսակների, գաղտնաբառերի և կառավարման համար անվտանգ արձանագրությունների կիրառում);
- կապի համակցում կապի ծառայություն մատուցող ընկերությունների հետ (VLAN-ների, կապի տեսակի և արագության ուղղությամբ);
- VPN մեխանիզմների կիրառում;
- ցանցային սարքավորումների ծրագրային ապահովումների (IOS) պարբերարաբար թարմացում:

ՀՀ քննչական կոմիտեի տվյալների փոխանակման գերատեսչական ցանցում պարբերաբար պրոֆիլակտիկ աշխատանքների իրականացում:
Անսարքությունների դեպքում երթուղիչների նորոգում կամ փոխարինում նոր սարքերով:
ՀՀ քննչական կոմիտեի տվյալների փոխանակման գերատեսչական ցանցի զարգացման անհրաժեշտությունից ելնելով նոր նախագծերի պատրաստում և խորհրդատվություն:

Ստորև ներկայացնում ենք մատուցվող ծառայությունների ամսեկան արժեքները (առանց ԱԱՀ)

Անվանումը	**քանակ**	**Միավորի գին (ՀՀ դրամ)**
Օպտիկական կապուղիներ		
3 Մբիթ/վ արագության կապուղի	35	4500
10 Մբիթ/վ արագության կապուղի	15	4200
10 Մբիթ/վ արագության կապուղի	4	5000
20 Մբիթ/վ արագության կապուղի	1	10000

50 Մբիթ/վ արագության կապուղի	1	25000
Տվյալների փոխանակման համակարգչային գերատեսչական ցանցի կառավարում և սպասարկում	1	205000
Աբոնենտների սարքավորումների և ծրագրային ապահովում ու տեխնիկական սպասարկում	56	7500
Կազմակերպության շահույթը կազմում է 8 %:		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ քննչական կոմիտե
Ք.Երևան Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011000834
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՖՎ&Գ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան,0014 Ազատության պող.24,
4 շինություն
«ԱրմՄվիսԲանկ» ՓԲԸ
Հ/Հ 25000105200110
ՀՎՀՀ 03004979
էլ. հասցեն՝ info@fvg.am
հեռ. (091333555)

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
« 19 » հունվարի 2022թ. կնքված
«ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ՏՓ-22/1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72311240/1	Տվյալների փոխանցման ծառայություններ	980000	2100000	2800000	3500000	5180000	6020000	7000000	8400000	9940000	11200000	12600000	14000000	14000000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ քննչական կոմիտե
Ք.Երևան Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011000834
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՖՎ&Գ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան,0014 Ազատության պող.24, 4
շինություն
«ԱրմՄվիսԲանկ» ՓԲԸ
Հ/Հ 25000105200110
ՀՎՀՀ 03004979
էլ. հասցեն՝ info@fvg.am
հեռ. (091333555)

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« » հունվարի 2022թ. կնքված
«ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ՏՓ-22/1» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
« » հունվարի 2022թ. կնքված
«ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ՏՓ-22/1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն